


**ARMENIAN HOLY TRINITY  
CHURCH of GREATER BOSTON**

**1961 ANNUAL REPORT**



Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ՍԵՏԱԳՈՅՆ ԳՈՍԹՈՆԻ

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Աստուծոյ ողորմութեամբ ողջամբ եւ յաջողութեամբ բոլորեցինք 1961 տարին: 1961-ը մեր եկեղեցւոյ բովանդակ պատմութեան մէջ հանդիսացաւ երազներու եւ տեսիլներու իրազործումն ու լրումը: Տարիներէ ի վեր մեր բոլորին նիւթական զոհողութիւններն ու բարոյական շանքերը մեզ հասցուցին զազաթնակէտի մը որ ցարդ Ամերիկայի մէջ, ինչու չէ նաեւ Սփիւռքի մէջ, ոչ մէկ համայնք կրցաւ հասնիլ: Ատիկայ հայ անունին պատիւ բերող եւ Աստուծոյ փառք ու պարծանք ապահովող մեր նորակառոյց հոյակապ եկեղեցին է, որուն օծումը կատարուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ: Սեպտեմբեր 17, Կիրակի, Խաչվերացի օրը:

Սեր տարեկան գործունէութիւնը սեղմօրէն կը ներկայացնենք ստորեւ:—

Ա.— Կրօնական պաշտամունք.— Ամէն Կիրակի անխափան մատուցած ենք Ս. Պատարագ եւ քարոզած ենք Կենաց Բանին: Նոր եկեղեցի փոխադրուելէ յետոյ սկսած ենք կանոնաւոր կերպով քարոզել նաեւ անգլերէն երկու Կիրակին անգամ մը ի սէր եւ ի ազգային-կրօնական դաստիարակութիւն Ամերիկացիներ մեր նորահաս սերունդին: Անգլերէն լեզուով տրուած մեր քարոզները վերածած ենք շարքերու, որպէս մարդը, կրօնքը եւ Աստուած եւ երեքին փոխհարաբերութիւնները, Գրիստոս եւ եկեղեցի, Առաքելական գործունէութիւն եւ եկեղեցւոյ հիմնարկութիւնը աշխարհի վրայ: Ասոնց պիտի հետեւին այլ շարքեր, այսպէս, Առաքելական գործունէութիւն ի Հայս, Գրիգոր Լուսաւորիչ եւ Հայց. եկեղեցին մինչեւ Հինգերորդ դար, բացատրութիւն Ս. Պատարագի Հաւատամքի եւ Խորհուրդներու:

Վստահ ենք որ հին եւ նոր սերունդները համահաւասար կերպով եթէ հետեւին մեր այս քարոզներու շարքերուն մեծապէս պիտի գիտակցին իրենց հաւատքին սրբութեան, խորութեան եւ ուղղափառութեան: Պատարագի պաշտամունքի ատեն աւելի լաւ հասկնալով պիտի հետեւին եւ աղօթեն:

Բ.— Մկրտութիւնք.— Ներկայ տարուան ընթացքին մեր կատարած մկրտութեանց թիւը եղած է 51, որոնց 29 հատը կատարուած են վերջին ամիսներուն նոր եկեղեցւոյ մէջ:

Հոս կ'ուզենք յորդորել մեր ծխականները որ իրենց զաւակները փոքր եղած ատեննին բերեն մկրտութեան, եւ ոչ թէ հասակաւոր դառնալէ յետոյ: Եւ եթէ տակաւին հասակաւոր չմտուածներ կան թող փութան զալու մկրտուելու եւ Աստուծոյ շնորհները ընդունելու համար:

Զմկրտուած անձ մը ԻՐԱՒԻՒՆ ԶՈՒՆԻ ՀԱՂՈՐԴՈՒՆԵԼՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑ-ԻՈՅ ԽՈՐՀՈՒՐԴՈՒՎ ԱՍՈՒՍՆԱՆԱԼՈՒ:

Գ.— ԳՍԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ.— Օրհնած ենք 14 զոյգերու, որոնցմէ 9 հատը նոր եկեղեցւոյ մէջ: 14 պսակներու 8 հատը եղած է խառն մուսնութիւն: Պսակադրութենէն առաջ բոլորն ալ խրատած ենք, իսկ պսակի առիթով ալ հրապարակաւ շեշտած ենք մուսնական կեանքի սրբութիւնը եւ հաշտ ու սիրով ապրելու միջոցները: Պսակէն յետոյ բոլորին ղրկած ենք իրենց վկայագիրները եւ շնորհաւորական քարտ յանուն Սիւսական Խորհուրդի:

Դ.— ԹԱՂՈՒՄՆԵՐ.— Այս տարի մեր կատարած թաղման արարողութիւնները եղած են 38, որոնցմէ 9 հատը նոր եկեղեցւոյ մէջ: Թաղումներէ յետոյ այցելած ենք ննջեցեալներու տունները հոգեճաշերը օրհնելու եւ սգաւորները

մխիթարեւոյ Համար: Մխիթարական այցելութիւն տուած ենք սգաւորներու քառասունքի ընթացքին մէկ կամ երկու անգամ պարագային համեմատ: Թաղումներէն յետոյ սգաւորներուն ղրկուած են նաեւ ցաւակցական քարտեր յանուն Մխական խորհուրդի:

Ե.— ԳՐԱՍԵՆԵԱԿ.— Մեր գրասենեակը կը գրաւէ մեր կեանքին մէջ կարեւոր տեղ մը: Հետզհետէ բարգաւաճող մեր եկեղեցւոյ գործերը ոչ միայն բազմացած են այլ եւ բազմապատկուած են քանակով եւ որակով: Մեր հառաձայնը առտուընէ մինչեւ իրիկուն անդադար կը հնչէ, որ կը նշանակէ թէ ցմբողջ համայնքը մեծ հետաքրքրութեամբ լարուած է հանդէպ եկեղեցւոյ: Իւրաքանչիւրը բան մը ունի հարցնելիք կամ կարգադրելիք եկեղեցւոյ կամ ընտանիքի շուրջ: Մեր երկու քարտուղարներն ալ օրն ի բուն զբաղած են իրենց գրասենեակներուն առջեւ: Ստացուած բոլոր թղթակցութիւնք կանոնաւոր կերպով եւ տեսակին համեմատ պահուած են յատուկ թղթածրարներուն մէջ, ինչպէս եւ առաքուածներու պատճէնները: Հաստատութեան մը յաջողութիւնը կախում ունի անոր գրասենեակի կանոնաւորութենէն: Այդպէս ալ մեր եկեղեցին օր ըստ օրէ աճեցաւ մեր գրասենեակի կանոնաւոր գործունէութենէն եւ երագաշարժ յարաբերութենէն:

Խորհրդակատարութեանց համար եկեղեցւոյ մէջ կը պահենք կանոնաւոր տեսակներ, իսկ գրասենեակի մէջ ալ խոշոր եւ կանոնաւոր յատուկ տոմարներ առանձինն Սկրտութիւններու, Պատկներու եւ Թաղումներու համար: Գրասենեակի մեր անձնական ժամերը եղած են ընդհանրապէս կէսօրէ առաջ երբ կարելի չէ տեղ այցելել, ի բաց առեալ գործով բացակայելէ:

Զ.— ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.— Հիւանդանոց այցելութիւնը մաս կը կազմէ մեր խորհուրդներու: Հետեւաբար մեզի սկզբունք եւ աւագ պարտականութիւն կը սեպենք անմիջապէս այցելել հիւանդներու երբ իմացած ենք անոն մասին: Դժբախտաբար շատ անգամ հիւանդներ եւ անոնց պաշտօնները պահած են մեզմէ իրենց հիւանդութիւնները կամ հիւանդանոցը: Յետագային այսպիսիներէ ալ մեղադրանք լսած ենք թէ չենք այցելել իրենց: Մեր ծուխի շրջագիծին մէջ գտնուող շուրջ հարիւր քաղաքներու հիւանդանոցները առանցին առանցին կարող չենք շրջելու եւ հիւանդ փնտռելու: Կ'այցելենք միայն անոնց որոնց մասին երբ լուր տրուի մեզի: Ընթացիկ տարուան ընթացքին այցելած ենք 129 հիւանդներու մօտաւոր կամ հեռաւոր վայրերու մէջ, տաքին կամ ցուրտին, ցերեկը կամ գիշերը առանց դժկամակութեան: Բոլորին աղօթած, մխիթարած եւ քաջալերած ենք:

Է.— ՄԽԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ.— Մխական այցելութիւնը եկեղեցականի գլխաւոր պարտականութիւններէն մին է: Մխական այցելութեամբ Հովիւը իր հօտին հետ մօտէն շփման մէջ կը մտնէ: Կը յորդորէ անոնց եկեղեցի գալ աւելի յաճախ: Տան մէջ գտնուող պատանիներն ու երիտասարդները կա շանայ կապել մեր կազմակերպութեանց, իսկ փոքրիկները հայ կամ կիրականօրեայ դպրոց: Դժբախտաբար այս մարզին մէջ եկեղեցաշինութեան գործին ձեռնարկելէ յետոյ շաբաթը հազիւ երկու տուն այցելած ենք: Այժմ որ շինութեան գործը վերջացած է վերսկսած ենք միշին յաշուով օրական ծուխ մը այցելել: Մեր այցելութեանց ընթացքին շատ անգամներ շինութեան ձեռնարկներ ապահոված ենք:

Ը.— ՄԵՐԱՆՈՑ.— Այցելութիւններու շարքին կարելի է միացնել Պոստոնի Հայոց Մերանոցը, ուր կանոնաւոր կերպով այցելած ենք ամիսը անգամ մը քարոզելու տարէցներու, երբեմն կարճ արարողութիւններ կատարելու, հիւանդներուն աղօթելու: Ասոնցմէ դուրս միշտ Մնունդին եւ Զատկին Ս. Հաղորդութիւ տալու գացած ենք եւ ներկայ եղած ենք ձեռնարկներուն:

Թ.— ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ.— Ի պաշտօնէ միշտ ներկայ գտնուած ու նախագահած ենք Մխական խորհուրդի, Մինութեան Յանձնախումբի ժողովներուն եւ եկեղեցապատկան միւս մարմիններու ամէն անգամ որ մեր պայմանները ներած է



խալի է որ վերակենդանացաւ նոր եկեղեցւոյ կառուցումով: Փորձերը վերսկսած են: Նոր վարչութիւն ընտրուեցաւ վերակազմակերպութեան համար: Սակայն դարձեալ կը տեսնուի թէ մեր դպրաց դասին տկար կողմը իզական սեռն է: Տօնական օրերուն միայն խումբ մը տիկիներ կու գան ու կը լեցնեն դասը: Պէտք ունինք երիտասարդ աղջիկներու: Մօտատենէն դասի անդամներէն սարկաւազներ պիտի պատրաստուին: Ամէն գնահատանքի արժանի են մեր երգեցիկ խումբի անդամները, դպրապետով եւ երգեհոնահարով, որոնք մեզի կ'օժանդակեն ամէն կիրակի Ս. Պատարագին:

ԺԴ.- ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ.- Մեր Կիրակնօրեայ Դպրոցը մեր եկեղեցւոյ ապագայ սիւնն է: Ուրախալի է որ նոր եկեղեցւոյ կառուցումով քառապատկուեցաւ աշակերտներու թիւը: Միշտ շանացած ենք մեր խորհուրդներով եւ թելադրութիւններով օգտակար հանդիսանալ դպրոցի տեսչութեան: Վերի դասարաններու աշակերտութիւնը պիտի օգտուի մեր անգլերէն քարոզներէն: Կիրակնօրեայ դպրոցի ապագային համար ունինք ծրագիրներ, որոնք, վստահ ենք որ, մեծապէս օգտակար պիտի հանդիսանան եւ բոլոր դասարանները աշակերտներով պիտի լեցուին: Անգամ մը եւս կը յորդորենք ծնողները որ փոխանակ օտար կերակնօրեաներ ղրկելու իրենց զաւակները մեզի բերեն որ հայ մեծնան եւ այդ ձեւով իրենք ալ եկեղեցի կու գան:

ԺԵ.- ՀԱՅ ԴՊՐՈՑ.- Հայ Դպրոցը մեր սրտին կը խօսի, վասն զի միայն Հայ Դպրոցին մէջ է որ փոքրիկը հայերէն գրել կարգալ պիտի սորվի: Թիք փոքրիկներ հայերէն գիտնան կարելի է Կիրակնօրեայ Դպրոցը հայերէնով կառավարել, ինչ որ բոլոր ծնողաց փափաքն է: Զանացինք Կրթասիրաց Միութեան նեցուկ հանդիսանալ, որ իր կարգին Հայ Դպրոցը կը զարգացնէ: Ուրախալի է որ տարիներէ ի վեր Արլինկթընի մէջ գոյութիւն ունեցող Հայ Դպրոցն ալ մեր յորդորներուն վրայ փոխադրուեցաւ մեր շէնքը եւ զգալի յառաջացում ցուցուց:

ԺԶ.- ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ՄԻՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ,- Սերտ յարաբերութիւն պահեցինք եկեղեցապատկան միւս բոլոր կազմակերպութիւններու հետ եւս (Զորս Տիկնանց Միութիւններ, Արանց Միութիւն եւ Երիտասարդաց Միութեան երկու բաժինները) որոնց ատենապետները միշտ խորհրդակցած են մեզի հետ եւ ընդունած են մեր թելադրութիւնները: Մենք անձնապէս կը նկատենք զմեզ ոչ միայն ի պաշտօնէ գլուխը մեր բոլոր կազմակերպութիւններու, այլ սիրտով մէկ անբաժան մասը բոլորին որպէս խոստովանահայր եւ հոգեւոր հովիւ քրիստոսի այս բանաւոր հօտին:

ԺԷ.- ԶԱՐՏՈՒՂԱՐՆԵՐ.- Մեր երկու քարտուղարները, Պ. Գարեգին Պօղոսեան եւ Օր. Մարի Մըսըրեան, մեր ամէնօրեայ գործակիցները եղած են իրենց տրուած բոլոր գործերը արագ եւ անթերի գործադրութեան մէջ դնելով: Մեր գրասենեակներու դրութիւնը վերածուած է ընտանեկան անդամներու համերաշխ ու ներդաշնակ գործակցութեան:

ԺԸ.- ԼՈՒՍԱՐԱՐ.- Նոր եկեղեցւոյ համար ունեցանք Լուսարար մը, յանձին մեր սարկաւազ Պետրոս Առաքեալի, որ օրն ի բուն մեր հսկողութեան տակ եւ մեր հրահանգներուն համաձայն կը զբաղի եկեղեցւոյ մաքրութեամբ ու բարեզարդումով: Գնահատելի է իր տարած բծախնդիր աշխատանքը:

ԺԹ.- ՏԱՃԱՐ.- Ս. Եկեղեցւոյս 'Տաճար' մասաթերթիկը հրատարակեցինք կանոնաւորաբար եկեղեցւոյ եւ եկեղեցապատկան մարմիններու լուրերը տալով հայերէն եւ անգլերէն լեզուներով: 'Տաճար' փոքր է ծաւալով, բայց հետաքրքրութեամբ կը փնտռուի ծխականներու կողմէ: Այս հետաքրքրութիւնը անոնց եկեղեցասիրութիւնը կը բնորոշէ: 'Տաճար' կը հրատարակուի երեք հազար օրինակ եւ կը ղրկուի Մեծագոյն Պոսթոնի մեր ունեցած հասցէներու:

Ի.- ՏԱՍՆԱՄԵԱՅ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ.- Այս տարի կը լրանայ մեր Ամերիկա ժամանելուն եւ Ս. Եկեղեցւոյս մէջ ծառայութեան տասնամեակը: Մեր կեանքի ամենէն եփուն ու փորձառու շրջանին եկեղեցական ասպարէզ մտանք եւ մեր ծառայութեան գլխաւոր դաշտը Պոսթոն հանդիսացաւ, որու վրայ ձեռնադրուած ենք

1949 Դեկտ. 4-ին Անթիլեասի Մայր Տաճարին մէջ երանաշնորհ Գարեգին Կաթողիկոսի նախագահութեամբ:

Լման տասը տարի գիշերը ցերեկին խառնելով վազեցինք վասն բարօրութեան Ս. Եկեղեցւոյս որ այսօր փառաւորութեամբ բոլորիս հաւատքին ու աշխատանքին շնորհիւ այս հոյակապ ու պատուաբեր կաթողիկէով:

Տասը տարիներու ընթացքին ընտելացանք բոլորիդ հետ, եւ շատերուն հետ ընտանեկան անդամի նման, միշտ մէկ նպատակ ունենալով միայն, որն է ճշմարիտ հոգեւոր առաջնորդութիւն ընձեռնել բոլորին, հաւաքել մէկ հոգեւոր եւ ազգային երգիքին ներքեւ բոլորը հաւատարիմ մնալու համար մեր հայրերու լոյս հաւատքին, որուն համար անոնք իրենց արեամբ իսկ վկայեցին:

Տասը տարիներու անշեղ եւ անշահախնդիր մեր ծառայութիւնը վստահ ենք թէ կ'ապացուցանեն թէ դոյզն օգտակարութիւն մը ունեցանք այս համայնքին եւ ի մասնաւորի մեր սուրբ եկեղեցւոյ, որուն մէկ տրուպ ծառան եւ պաշտօնեան ենք:

Ի վերջ բանիս մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք Ս. Եկեղեցւոյս բոլոր մարմիններուն եւ ծխականներուն որ զործակցեցան մեզի մեր կրօնական եւ հոգեւոր պարտականութեանց իրագործման համար եւ բոլորը կ'օրնենք յանուն Աստուցոյ, մաղթելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ երջանկութիւն, իսկ եկեղեցւոյս եւ անոր մարմիններուն յարատեւ յառաջդիմութիւն եւ բոլոր ծրագիրներուն յառաջդիմութիւն:

ԱՄԱՐՔԻՆ Ա. ԱՀՆՅ. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ  
Հոգեւոր Հովիւ  
Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ  
Մեծագոյն Պոսթոնի

## The Armenian Holy Trinity Church of Greater Boston

### Parish Council Chairman's Report

As Chairman of the Parish Council of the Armenian Holy Trinity Church of Greater Boston, I am pleased and proud to report that we have seen a gratifying accomplishment during this past year, 1961, and that the glorious achievement of completing our magnificent edifice should be considered the fulfillment of all our prayers since its constitution and existence. It is a significant year also in the annals of Armenian Churches throughout the United States and particularly in our church history.

With the coordination, co-operation and wilful help of your elected officers, the Architect, dues-paying members as well as the community at large, we have moved steadily forward in that long, hard struggle to build our new home of worship. At first many individuals were skeptical and dubious that we could possibly undertake such a huge project and to conclude it successfully, but today, just as Christ's Disciple Thomas had to be shown, our well-meaning doubters see the spire of our beautiful church reaching to the heavens, glory in the magnificence of our buildings on a national historic spot in Cambridge, and they too are extremely proud.

To be sure, we have done much in the former years striving for organizational progress, but our task is yet unfinished. Admitting that everyone who has wilfully involved himself in this work has given and served generously and will continue to thus express his love in the Lord's work, there are many others who have not come forward as yet, to offer their share to this memorable enterprise.

The church mortgage still weighs heavily on the shoulders of our loyal, church loving people, and it will require the collective efforts of every single individual to relieve this obligation. We should not and cannot stop working together, with one objective in mind --- to pay off the mortgage and enjoy the honor of attending a banquet which will be specifically given for the public burning of the mortgage.

Our Der Hiar, the Parish Council, and Members of the Building Committee have worked together with team-like precision, with much understanding and great patience in the grilling work endured, and this fellowship of kindred determination gave impetus to the job at hand. This God-given spirit helped everyone to carry out his difficult and sometimes tedious assignments at great personal sacrifices and applications.

My most sincere thanks goes to these teammates. Naturally, I heartily include every organization and individual who had even the slightest part in our endeavors, who had anything to do in helping the church and for the vitally important role they played in the past and previous years.

I would be remiss in my duties if I failed to individually thank each member of our Parish Council.

Our collective expressions of gratitude goes to our President of the Parish Council, Reverend Father Papken Maksoudian.

Parish Council Chairman's Report -2-

To Kay Kolligian, champion ticket seller, efficient Church Treasurer, who for so many years has faithfully kept excellent records, and Chairman of the Board of Governors, we all are truly indebted;

We are equally privileged to recognize the unfailing efforts of Haig Jamgochian for keeping reports of our deliberations, his loyalty to me personally and to others on the Parish Council;

Arthur Anisbigian, who not only assisted Kay Kolligian as Assistant Treasurer of the church, but most important kept wonderful records of donors to the Building Fund, together with records of disbursements;

John Soursourian, our Vice President, for his timely suggestions and keeping his alert eyes on our Sunday School;

Miran Juskalian, for his management of our successful picnic as well as keeping his expert eye on the needs of the buildings during the entire year, and serving as Vice Chairman of the Board of Governors;

Aram Hintlian, for his having sold so many tickets, collecting gifts for the picnic and assisting in the kitchen. Aram has done everything and anything asked of him, and his dedication to serve in the Lord's work must be well noted;

Charles Talanian, who went to great lengths in selling our Shawmut Avenue church building; we won't forget his vigilant efforts in keeping the City Inspectors away from the various trades during the construction period of our new church;

Arthur Najarian, who was initiated into our midst by appointment to Chairman of the Raffle Tickets, for doing a tremendous job. Although Arthur's health was impaired at times, he gladly gave of his time unstintingly;

Peter Aghamian, who can certainly be complimented for his ability to sternly say "NO!" to all bills of the Building Committee, and for firmly holding a tight grip on the church purse strings --- Peter prevented many unnecessary expenses; and last but not least

Charles Zeytounjian, who gladly assumed the role of general maintenance man throughout the general work; it didn't make any difference whether he was inspecting the place or erecting shelves, wherever you saw Miran Juskalian, you saw Charlie Zeytounjian.

Thank you, all of you.

In conclusion, I wish everyone to know how deeply proud I am for the confidence placed in me, and for the great honor bestowed upon me for the small part I was to play in the fulfillment of our dream -- the wish and hope of every Armenian that a part of Etchmiadzin is now in Boston, with its open doors to worshipers, and with God's work cut out for each one of us. I am grateful for the wonderful fellowship I have been privileged to enjoy, and I ask for God's blessing upon us and our church.

Gen. Sarkis M. Zartarian, Chairman



THE ARMENIAN HOLY TRINITY CHURCH OF GREATER BOSTON

Report of the Parish Council  
1961

The year 1961 will go into the records as being the greatest era in the history of the Armenian Holy Trinity Church of Greater Boston. For in this year, our parishioners had the spiritual satisfaction of witnessing the dedication of one of the finest church edifices in the United States. We, the Parish Council, want to thank you for the privilege of having served you, and in helping to make this great dream a living reality.

Members of the Parish Council who contributed to this effort, under the patient and diligent guidance of our President, Rev. Father Papken Maksoudian, were:

Chairman	General S. Zartarian
Vice Chairman	J. Soursourian
Secretary	H. Jamgochian
Treasurer	K. Kolligian
Assist. Treasurer	A. Ansbikian

Advisors:- A. Hintlian, P. Adamian, C. Talanian  
M. Juskalian, C. Zeytoonjian, and A. Najarian

Parish Council meetings were held on the second and fourth Wednesdays of the month, in addition to special meetings, as the occasion demanded.

Included in the accomplishments of the Parish Council for the year 1961 are the following:

1. Formation of a Board of Governors, whose prime duty has been that of furnishing and maintaining the interior and surrounding areas of the church and auditorium.
2. Assisting and contributing to the efficient operation of our fast growing Sunday School.
3. Actively participating in all Building Committee meetings.
4. Administering and disposing of all legal transactions, and accounting of all financial matters.
5. Hosting the Annual Diocesan Assembly held here on Saturday and Sunday, the 29th and 30th of April and arranging details of the subsequent banquet.
6. Sponsoring and arranging details of one of our most successful picnics, held at Ararat Camp, July 9, 1961.
7. Rendering assistance towards our Consecration Day Program on September 17, 1961.
8. Spearheading the joint Testimonial Banquet for our Der Hayr, in his elevation to the rank of Avak Kahana and Zaven Baikar on his receiving the Order of Saint Gregory.

Innumerable people have volunteered throughout the year to help in our efforts. We would like, however, to extend our special thanks to the Building Committee, Mr. Humayag Habeshian, Mrs. Charles Garabedian, Mrs. Fyloon Mazmanian, and Mr. Harold Zulalian, whom we have had to call upon at various times.

Our Parish Council wants to thank particularly our President, Rev. Father Papken Maksoudian and Chairman, General Sarkis Zartarian, who have had to bear with us throughout the trying period and without whose patience and zeal our job would have been more magnified. We also want to extend our thanks to all subordinate organizations of the Church who have assisted in making this such a memorable year. And, last but not least, our heartfelt appreciation towards all our parishioners without whose financial contributions, our efforts would have been in vain.

Respectfully submitted,

Haig Jamgochian  
Secretary

YEARLY STATEMENT

OF THE ARMENIAN HOLY TRINITY CHURCH PARISH COUNCIL

JANUARY 1, 1961 - DECEMBER 31, 1961

1961 ՏԱՐՈՒԱՆ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

ՊԱՍԹՈՆԻ Ս.ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՑ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

Disbursements	-----	ԵԼՔ	
Rev. Papken Maksoudian	Տ.Բաբգէն ԲՆՅ. Մագսուտեան		\$4376.00
Choir Master-D. Dinjian	Դպրապետին	1010.00	
Organist- A. Tashjian	Օրկընիստին	540.00	
Karekin Bogosian	Գարեգին Գոսդոսեան	1200.00	
Mari Messerlian	Մարի Սըսըրլեան	911.25	
Sexton-Salary	Տընտեսին	2924.92	
Lousarar-Salary	Լուսարարին	784.55	
Diocesan Dues	Առաջնորդարանի Տուրք	3937.75	
Clergy Relief Fund	Եկեղեցականներու Ֆընտին	110.00	
Building Maintenance	Նորոգութիւն եւ Շինութիւն	1306.31	
Fuel, Oil	Տաքութիւն եւ Իւղ	5338.63	
Gas, Electricity, Candles	Կազ Ելեքթրականութիւն, Մոմ	2311.42	
Books and Calenders	Գրքերու եւ Օրացոյցի	672.50	
Insurance	Ապահովագրութիւն	4145.62	
Telephone and Postage	Հեռախօս եւ Դրոշմաթուղթ	1689.95	
Newsletters, Publication	Մանուցում եւ Տպագրութիւն	2284.58	
In Lieu of flowers payments	Փոխան Մողկեպսակի Վճարում	3871.27	
Social Security Tax	Գործաւորներու Համար Թաքս	88.95	
Traveling Expenses	Ճանապարհածախս	638.31	
Funeral Expenses	Թաղման Ծախս	1480.00	
Car Expenses	Ինքնաշարժի Ծախս	1400.96	
Water Bill	Ջուրի Ծախս	124.16	
Kitchen Equipments	Խոհանոցի Պիտոյքներ	3829.58	
Stationary	Գրեխկան Պիտոյքներ	1650.10	
Hall Expenses	Սրահի Ծախս	2200.80	
Sunday School Expenses	Կիրակնօրեայ Դպրոցի Ծախս	1077.68	
Visiting Clergy	Այցելու Եկեղեցականներուն	763.01	
Church Equipment	Եկեղեցւոյ Պիտոյքներ	1291.51	
Etchmiadzin Louma	Էջմիածին Լուսա	300.00	
Special Funds (Gifts)	Մասնակի նուէրներ	225.00	
Picnic	Դաշտահանդէս	3437.38	
Convention Dinner (Cabot Farm)	Համագումարի Ծախս	1300.00	
Consecration Banquet	Օծման ձաշկերոյթի Ծախքեր	5444.74	
Misc.	Այլ եւայլ Ծախքեր	1873.76	
TOTAL	Ընդհանուր Գումար Ծախքերու	\$65076.19	
Transfer to Building Fund	Փոխանձուած Շինութեան Ֆընտին	3535.00	
TOTAL Disbursements	Ընդհանուր Գումար	\$68076.19	
Cash in Bank December 31, 1961	Պատրաստ Դրամ Դեկտ. 31, 1961	345.54	
		<u>\$68421.73</u>	

YEARLY STATEMENT

OF THE ARMENIAN HOLY TRINITY CHURCH PARISH COUNCIL

January 1, 1961 - December 31, 1961

INCOME

ՄՈՒՏՔ

Balance December 31, 1960			\$1372.98
Membership Dues	Անդամատուրքերէն	\$ 2496.00	
Plate Collection	Պնակներէն	14979.88	
Requiem Masses	Հոգեհանգիստներէն	6404.00	
Baptisms	Սկրտութիւններէն	816.00	
Weddings	Պսակներէն	505.00	
Funerals	Թաղումներէն	1305.00	
In Lieu of Flowers	Փոխան Մաղկեպսակներէն	14667.07	
Hall Contributions	Սրահի նուէրներէն	2070.00	
Youghakin	Իւղագին	1585.00	
Sale of Books & Calenders	Մխուած գիրք, Օրացոյց	167.00	
Gifts	Նուէրներէն	130.00	
Collection for Special Funds	Այլոց շոխանցելի գումարներէն	1962.13	
Misc. Receipts	Զանազան եկամուտ	1092.20	
Picnic	Դաշտահանդէսէն	7558.91	
Banquet (Convention)	Համագումարի ճաշէն	1932.00	
Consecration	Օծումէն եւ ճաշկերոյթէն	9375.26	
TOTAL Receipts for 1961	Ընդհանուր մուտք		67048.75
TOTAL	Ընդհանուր գումար		<u>\$68421.73</u>

Պոսթոնի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ Մխական Խորհուրդին 1961 տարե-  
 շրջանի ելեւմտից հաշիւները քննելով, Տոմարին մէջի արձանագրութեանց  
 համապատասխան ըլլալով ճշդութիւնը կը վաւերացնենք:

ԱՐԱ ՀԱՊԷՇԵԱՆ  
 ԳԱՐԵԳԻՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ  
 ՄԻՀՐԱՆ ԿՕՇԿԱՐԵԱՆ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ՍԵՏԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

ԵԿԵՂԵՑԱՄԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

1961 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ա.- ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ:-

1			
1.- Յուսուող	18	6.- Սեպտեմբեր	7
2.- Փետրուող	27	7.- Հոկտեմբեր	11
3.- Մարտ	22	8.- Հոկտեմբեր	24
4.- Ապրիլ	24	9.- Նոյեմբեր	5
5.- Յունիս	6	10.- Յունուար	2 1962 Քաջառ.

Բ.- ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ:-

- 1.- Փետրուող 16, Խօսող Երէցկիներ նիւթ(ՄԵՍ ՊԱՔԸ)
- 2.- Մարտ 2, Խօսող Երէցկիներ նիւթ(ՍԱՆԴՈՒԻՍ ԿՈՅՍԸ)
- 3.- Ապրիլ 6, Խօսող Տէր Հայրը նիւթ(ԿԱՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ ՕԳՈՒՏԸ ԵԿԵՂԵ-ՑԻՆԵՐՈՒՄ)
- 4.- Մայիս 4, --Յանձնախումբերու Խառն ժողով փոխանակ(ԱՆԴԱՄԱԿԱՆԻ)
- 5.- Յունիս 29, Զեռնարկ, ամառուան արձակուրդի առթիւ :
- 6.- Սեպտեմբեր 20, Խօսող Տիկ. Գասպարեան նիւթ (ԵԿԵՂԵՑԻՈՅ ԵՒ ՏԱՆ ՓՈԽՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆԸ)
- 7.- Հոկտեմբեր 5, Խօսող Երէցկիներ նիւթ (ՀՌԻՓՄԻՄԵԱՆՑ ԿՈՅՍԵՐԸ)
- 8.- Նոյեմբեր 2, Խօսող Երէցկիներ նիւթ (ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՕՐԸ)
- 9.- Դեկտեմբեր 7, Բրիտմըսի առթիւ պատիկ փրոկրամ մը:

Գ.- ԶԵՌՆԱՐԿՆԵՐ:-

- 1.- Զիւճթէ Բարթի, Յունուար 26, Խօսող Տէր Հայրը: Նրկայացուեցաւ զաւեշտ մը, անցաւ շատ յաջող:
- 2.- Զարդակոճակներու բաշխում, Ապրիլ 2, Զատկուան օրը:
- 3.- Վարչութեան տուած Բարթին, Ապրիլ 17, ասիկա տրուելիք շղթայ բարթիներու առաջինն էր: Անցաւ յաջող:
- 4.- Մեր թեմի եկեղեցականներու պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ մէջ, Ապրիլ 27, 28, 29, 30, օրերուն: Այս չորս օրերուն ճաշ տրուեցաւ պատշաճութեան համեմատ:
- 5.- Փենի Սէյլ, Մայիս 25, անցաւ յաջող:
- 6.- Վերջին ճաշ-ժողովը ամառուան արձակուրդին առաջ, Յունիս 29, յաջող անցաւ:
- 7.- Ութը եկեղեցիներու միացեալ դաշտահանդէսը, շատ յաջող անցաւ:
- 8.- Ս. Եկեղեցւոյս դաշտահանդէսը: Եկեղեցւոյ շուրջ բոլորուած բոլոր կազմակերպութեանց միացեալ ջանքերով կազմուած, անցաւ յաջող
- 9.- Նորակառոյց Ս. Եկեղեցւոյս օծման եւ բացման առթիւ, տարուած աշխատանքներ: Կարուեցան 20 շապիկներ դպրաց դասին համար: ճաշ տրուեցաւ:-- Ծաբթ Սեպտեմբեր 16ի կէսօրին, ճաշագին չկար: Ծաբթ Սեպտեմբեր 16ի իրիկունը ճաշագինով: Սեպտեմբեր 17ին Կիրակի ժամը 1:00ին, ճաշ տրուեցաւ հիւրասիրաբար:
- 10.- Հոկտեմբեր 22ի ճաշկերոյթը, Խօսող Պր. Ծահան Նաթալին, անցաւ յաջող
- 11.- Գառնսըլ ալ Զըրչըզ, օտար այլեւայլ եկեղեցիներ ներկայացնող կանացի կազմակերպութիւններ: տեղի ունեցւ Նոյեմբեր 3ին: Գործադրուեցաւ լաւ յայտագիր մը: Հիւրասիրութիւն կատարուեցաւ մեր եկեղեցասիրաց զոյգ միութեանց կողմէ, պատրաստուած հայկական այլեւայլ խմորեղէններով, ամեն ինչ առատ էր, օտարներ սքանչացան մեր հիւրասիրութեան ու նուիրումին վրայ: Առանց բացառութեան

ամէնն ալ իրենց հիացումը յայտնեցին տեսնելով մեր նորա-  
կառոյց փառաւոր եկեղեցին:

- 12.-Տէր Հօր եւ Ջաւէն Պայքարի ի պատիւ տրուած ճաշկերոյթը տեղի ունեցաւ նոյեմբեր 26ին, խօսողներ.- Առաջնորդ Սրբազան Հայրը, Տէր Հայրը, Ջաւէն Պայքարը, Ջօր. Սարգիս Ջարդարեանը եւ բոլոր բեմի սեղանի շուրջ նստողները, իրենց մասնակցութիւնը բերին քանի մը խօսքերով: Անցաւ շատ յաջող:
- 13.-Պաշարը տեղի ունեցաւ Դեկտեմբեր 2, անցաւ յաջող: Լաւ հասոյթ ունեցանք, ունէինք մեր սեփական սեղանը:
- 14.-Ունեցած ենք յետ-մահու անդամազրոյներ 100.00 տուար վճարելով, որոնց անուանացանկը պիտի հրատարակուի ետքը գրքոյկով մը:
- 15.-Ա.- Բէմէյն Սէյլ, տեղի ունեցաւ Մարտ. 22-25, Ջորեքշաբթի, Հինգշաբթի, ուրբաթ եւ շաբաթ օրերուն:  
Բ.- Բէմէյն Սէյլը տեղի ունեցաւ Յուլիս 12-15, Ջորեքշաբթի, Հինգշաբթի, ուրբաթ եւ Շաբաթ օրերուն:  
Գ.- Բէմէյն Սէյլ տեղի ունեցաւ Հոկտեմբեր 11-14, չորս օրերու ընդմէջ:

Մեր հոյակապ եկեղեցւոյ համար մեր խոստացած առաջնակարգ օրկընին փոխարժէքը 10.000 տուար ամբողջութեամբ յաջողեցանք վճարել այս տարուան ընթացքին, շնորհիւ մեր անդամուհիներու անձնուիրութեանց եւ զոհողութեանց:

Հետեւաբար կրնանք ըսել թէ բեղուն տարի մը բոլորեցինք:

Ի դիմաց  
Եկեղեցասէր Տիկնանց Միութեան

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԹՈՐՈՍԵԱՆ  
Ատենադպրուհի

ՓԱՅԼՈՒՆ ՍԱԶՄԱՆԵԱՆ  
Ատենապետուհի

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ՍԵՇԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

1961 ԾՐՋԱՆԻՆ ՄՈՒՏՔ ԵՂԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

1961 Յուլիուար 2-ին Պատրաստ Դրամը 2223.42  
Գանձուած տարեվճարները 469.50

Ձեռնարկներէն Գոյացած:-	ՄՈՒՏՔ	ԵԼՔ
Ճաշ ժողովներէ	610.35	240.28
Ս. Սարգիսի Ձեռնարկէն	462.95	114.20
Բէննի Սէյլէն գոյացած	583.60	80.80
Բըմէճ Սէյլէն	369.74	31.96
Զարդակոճակներէ	266.06	49.50
Ծախուած Բէնտիէ	35.00	
Վիճակ Տոմսակներէ Եկամուտ	353.00	31.82
Նուէրներ Ուրախ եւ Տխուր	259.50	130.00
Նուէր Խորանի եւ Գանձանակ.	26.60	
Երեսփոխանական ժողովի առթիւ		
Ճաշկերոյթէն Գոյացած	211.88	
Տարեկան Հոգեճաշի Ձեռնարկէն	613.80	138.65
Եկեղեցւոյ Օծման Նախորեա-		
կին Ճաշէն Գոյացած	345.00	122.16
Նուէր Օրկընի Համար	<del>643.80</del> 781	
Տէր Հօր եւ Զաւէն Պայքարի		
Ճաշկերոյթէն	1975.00	259.39
Ցետ Մահու Անդամագրութիւն	1445.00	
Խաչի Նուէրներ	11.00	
Տարեկան Պազարէն Եկամուտ	778.60	46.31
1960ի 55 Ամեակի Մոմավառու-		
թենէն Գանձուած	66.00	28.25
Տոկոս Պանգայէն Գանձուած	<u>62.25</u>	
	9256.33	
Թուրշիի Ծախք		17.60
2000 Հատ Փօսթ Քարք		181.95
Նուէրներ տրուած Եկեղեցիներուն		262.38
Մինութեան Յանձ. Փոխանցուած		1000.00
		<u>11735.25</u>
Պատրաստ Դրամ		214.00
	<u>11949.25</u>	<u>11949.25</u>

The Armenian Holy Trinity Church of Greater Boston

Men's Union

Annual Report - 1961

1. Nine general meetings were held. There was an invited speaker at each meeting.
2. The giant auction held in April in the church hall netted \$830.00.
3. At the June meeting the following officers and advisors were elected:

OFFICERS

Chairman	Harry D. Hagopian
Vice Chairman	Andrew Boyajian
Treasurer	Gardy Yagjian
Recording Secy.	William Roat
Corresponding Secy.	Martin Tufankjian

ADVISORS

Sooren Daniels	Edward Paul
John Danielson	Daniel Dorian
Ira Habeshian	William Martin
Louis Janigian	

Mr. Humayag Habeshian performed the installation of the officers.

At the June meeting, the members authorized the donation of \$1000.00 to the Church Building Fund. A check for \$1000.00 was thereupon presented to Rev. Father Maksoudian by the newly elected chairman, Harry Hagopian.

At this June meeting a motion was made and accepted to ammend the by-laws to state that the term of officers shall be two years instead of one year.

4. The Halloween Party sponsored in October by the membership was a successful event with over 200 children and their parents present.

At the October meeting Myron Berberian was appointed an advisor to fill the vacancy caused by the death of Edward Paul.

5. The treasury balance on December 31, 1961 was \$605.97 and there were forty active members.

Respectfully submitted,

William F. Roat, Recording Secy.

Harry D. Hagopian, Chairman



THE YOUNG WOMEN'S AUXILIARY OF THE ARMENIAN HOLY TRINITY CHURCH

SECRETARY'S ANNUAL REPORT - 1961

Executive meetings were held on the first Tuesday of the month and membership meetings were held on the third Tuesday of the month.

January - We held our regular executive and membership meetings.

February- We had our Valentine Social on Feb. 1, Martha Bogosian was chairman.

March- Marjorie Chase, of WCOP, came to our meeting and gave a talk on their CCA awards.

April- On April 19 we were hostesses for a dinner for our sister auxiliaries of the New England churches.  
Mrs. Harrity, of the Elizabeth Arden, came and gave a demonstration on the application of the cosmetics.

May- Our dinner meeting was held with a keyma dinner.  
We had our May luncheon- Roxie Najarian was chairman.  
The following officers were elected.

Chairman -	Azad Strazulla
Vice- Chairman -	Virginia Ohanian
Recording Secretary -	Julia Stephanian
Assistant Secretary -	Phyllis Martins
Corresponding Secretary -	Roxie Najarian

June - A joint membership and executive meeting was held.

July - Our members helped at the annual Church Picnic.

August- Vacation

September- The installation of officers was held. The Der Hayr was present and congratulated the newly elected officers.

October - Ara John Ohanian gave a talk on diamonds at our membership meeting. The annual dinner dance was held at the Diplomat in Saugus, Mass. Rose Zeytoonjian was chairman.

November- We were hostesses for World Community Day, which was held on Nov. 3. A dinner and social was held on Nov. 19 at the Cabot Farms to raise money for our annual bazaar. Julie Gazarian was chairman. Instead of baskets, donations were made to the needy for both Thanksgiving and Christmas.

December- The Annual Christmas Bazaar was held on Dec. 2. Ann Yacobian was chairman. During the year we held workshop every Tuesday morning for the Bazaar.

Respectfully submitted

Julia Stephanian  
Rec. Sec.

The Armenian Holy Trinity Church of Greater Boston

Young Women's Auxiliary

TREASURER'S ANNUAL REPORT

December 31, 1960 - December 31, 1961

INCOME

Cash balance on hand December 31, 1960	\$ 582.65
Membership Dues	198.00
Dinner Dance 10/10/60	180.00
Valentine Day Card Party	304.10
Luncheon & Card Party	1,191.30
Garden Party (given by Mrs. Alice Yagjian & Mrs. Peggy Jameson)	400.00
Interest - Cambridge Savings Bank	19.29
Contributions	49.50
Luncheons & Dinners served at Diocese Meetings	75.88
Contributions received from Dinner Meeting with Sister Chapters	205.00
Bazaar 12/2/61	6,510.76
Dinner Dance 10/11/61	2,801.00
	<u>\$12,517.48</u>

EXPENSES

Armenian Holy Trinity Church Building Fund	\$ 4,500.00
Valentine Day Card Party	21.43
Luncheon & Card Party	88.65
Dues - Cambridge Council of United Church Women	7.50
Dinner Meeting with Sister Chapters	261.16
Children's Day Plants	40.00
Dinner Dance 10/11/61	24.90
Kitchen Equipment	74.00
In Lieu of Flowers	25.00
Thanksgiving & Christmas Baskets	30.00
Stationery & Postage	38.16
Service Charges - Harvard Trust Co.	6.05
Bazaar 12/2/61	402.10
Tablecloths	12.00
Santa Claus Wig & Beard	17.50
Brocade for Der Hayr's Robe	59.00
	<u>5,607.45</u>
Cash Balance on Hand December 12/31/61	<u>6,910.03</u>
	<u>\$12,517.48</u>

Respectfully submitted,

Armine D. Hagopian  
Treasurer

Armenian Church Youth Organization of America

Boston Chapter

Annual Report - 1961

June 6, 1961	Business Meeting at Brattle Street
July 15, 1961	Beach Party at Nahant, Massachusetts
September 19, 1961	Business Meeting at Brattle Street
October 3, 1961	Business Meeting at Brattle Street
November 7, 1961	Supper Meeting at Brattle Street (Initiation services for Seniors and Juniors)
November 10, 1961	Toga Party - Richard Zeytoonjian's Home
November 21, 1961	Religious and Educational Meeting at Brattle Street
December 5, 1961	Business Meeting at Brattle Street
December 23, 1961	Christmas Party at Brattle Street
December 31, 1961	New Year's Eve Dance at Saugus, Mass.

Respectfully submitted,

Harold Essegian  
Chairman

Armenian Church Youth Organization of America

Boston Chapter

January 18, 1962

The ACYOA FINANCIAL REPORT covering the period from October 3, 1961 through January 18, 1962 is as follows:

RECEIPTS:

Balance forward from June, 1961	\$ 114.24
Membership Dues	\$ 105.00
Country Club Dance (June, 1961)	\$ 20.00
Beach Party (June, 1961)	\$ 21.00
Christmas Party	\$ 187.55
Supper Meeting	\$ 81.00
Refreshments	\$ 4.10

TOTAL RECEIPTS \$533.09

DISBURSEMENTS:

Membership Dues to Central Council	\$ 55.00
Christmas Party Expense	\$ 141.55
Supper Meeting	\$ 58.19
New Year's Dance (Band)	\$ 25.00
*Anniversary Ball (Band)	\$ 200.00
Secretarial Expense	\$ 23.60
Refreshments	\$ 8.89

TOTAL DISBURSEMENTS \$512.23

CASH BALANCE AS OF JANUARY 18, 1962 20.86  
\$533.09

\* The \$200.00 deposit on the Lester Lanin Orchestra for the Anniversary Ball will be returned by the end of January.

Respectfully submitted,

Richard Kharibian  
Treasurer

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՆԻ  
ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

ԿՐԹԱՍԻՐԱՑ ՍԻՈՒԹԻՒՆ

1961 ՏԱՐՈՒԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄ 1961-62 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ

Տիկին Վարդուհի Բարունակեան  
Տիկին Զապէլ Հապեշեան  
Պ. Գարեգին Պետրոսեան  
Տիկ. Սիրանոյշ Կիւլիսսեան  
Տիկ. Եղսաբեթ Պէրպէրեան  
Տիկ. Զապէլ Օտապաշեան  
Տիկ. Զուարթ Նալպանտեան

Ատենապետուհի  
Փոխ-ատենապետուհի  
Ատենադպիր  
Գանձապահ  
Փոխ-գանձապահ  
Խորհրդական  
Խորհրդական

1961 տարուան գործունէութիւնը կու տանք ստորեւ համառօտ կերպով:  
Հակառակ վարչութեան շանքերուն անդամական ժողովները թերի եղած են, ան-  
դամներու բնակութեան վայրերու հեռաւորութեան պատճառաւ: Սակայն ուրա-  
խալի է յայտնել թէ տարուան վերջերը միութիւնս զօրացաւ երիտասարդ մայրե-  
րու անդամագրութեամբ եւ անոնց ցուցադրած մեծ հետաքրքրութեամբ ու գոր-  
ծունէութեամբ: Այս ձեւով դպրոցի աշակերտութեան թիւն ալ բարձրացաւ 40-է  
նոր վարչութեան կազմին մեծ մասը կը բաղկանայ երիտասարդ մայրերէ:

Մեր ուսուցիչներն են. - Երէցկին Ազատուհի Մագսուտեան եւ Պ. Յով-  
հաննէս Սարգիսեան: Նոր շրջանին Միութեանս երիտասարդ անդամուհիներէն  
Տիկիններ Զապէլ Գէորգեան եւ Լիւսի Սարգիսեան պատուակալ կերպով օգնել  
յանձն առին եւ կանոնաւորաբար կը զբաղին փոքրիկներով:

Դպրոցի դասաւանդութեան օրն է Շաբաթ, ժամը 10-12: Վայրը Եկեղեցւոյ  
դպրոցի շէնքը:

Միութիւնս իր ծախսերը գոցելու համար կ'ունենայ երկու ձեռնարկ,  
առաջինը Ս. Մննդեան տօնին առթիւ ճաշկերոյթ, եւ երկրորդը Մեծ Պահոց  
Իւնիսթէ Բարթի: Շրջագայութեան կը տրուի նաեւ վիճակահանութեան տոմսեր:  
Իսկ որպէս անդամատուրք կը գանձուի տարեկան մէկական տուար: Երկու ուսու-  
ցիչներու տարեթոշակ կը վճարուի 450.00 տուար:

Տարուոյս վերջը Միութիւնս իր ծախսերը բոլորովին գոցել է յետոյ  
պահեստի դրամ ունի 1575.81 տուար:

Միութեանս անդամները կը գիտակցին թէ կատարեալ չէ կատարուած գոր-  
ծը: Հոդ հասնելու համար պէտք ունինք բոլոր երիտասարդ մայրերու անդա-  
մագրութեան եւ մանաւանդ իրենց զաւակներուն հայեցի դաստիարակութեան  
համար:


Ի դիմաց  
Կրթասիրաց Միութեան

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՏՐՈՍԵԱ  
Ատենադպիր

ՎԱՐԴՈՒՀԻ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ  
Ատենապետուհի


Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

ՍԵՇԱԳՈՅՆ ԸՈՍԹՈՆԻ



ԱՐԼԻՆԿԹՁՆԻ ՀԱՅ ԴՐՐՈՑԻ ԿԱՆԱՆՑ ԱԿՈՒՄԲ

1961 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ



ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

Տիկ. Վերոնիգա Գազանճեան	Ատենապետուհի
Տիկ. Գոհար Գոնտուրանեան	Փոխ-ատենապետուհի
Տիկ. Ալիս Յարութիւնեան	Ատենադպրուհի
Տիկ. Փայլուն Խօլլիկեան	Փոխ-ատենադպրուհի
Տիկ. Անի Ալեքզէնտր	Գանձապահ
Տիկ. Նուարդ Սիմոնեան	Կրթ.ի ատենապետուհի
Տիկ. Արաքս Նաճարեան	Ուրախութեան եւ ցաւակցական
	քարտեր գրող դպրուհի
Տիկ. Րոզ Զարդարեան	Ժողովներու Հրաւերագիր
	գրող դպրուհի
Տիկ. Փայլուն Մազմանեան	Խորհրդական
Տիկ. Աղաւնի Անանիկեան	Խորհրդական

ԹՐԸՍԹԻՆԵՐ

Տիկնայք Սուլթան Հինդլեան, Արտեմիս Միրազ եւ Գոհար Գոնտուրանեան

Թիւ Վարչական ժողովներու	9
Թիւ Անդամական ժողովներու	8
Թիւ Ձեռնարկներու	3

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

- 1.- Խմորեղէնի վաճառում
- 2.- Ճաշկերոյթ
- 3.- Բիւնթի բարթի:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ատենապետուհի	Տիկ. Ազնիւ Ապիտեան
Թիւ ատենախօսներու	5

ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ

Թիւ աշակերտութեան	25
-------------------	----

Ս. ԵՐՐՈՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ  
ՍԵՇԱԳՈՑՆ ՊՈՍԹՈՆԻ

ԶԸԼՍԻԻ ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

1961 ՏԱՐԻՈՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Վերժին Խզարճեան  
Երանուհի Կարապետեան  
Աննա Քինոսեան  
Գոհար Ալեանաքեան  
Ազնիւ Մատթէոսեան  
Վարդեր Գրիգորեան  
Պայծառ Թադէոսեան

Ատենապետուհի  
Փոխ-ատենապետուհի  
Ատենադպրուհի  
Գանձապահ  
Խորհրդական  
Խորհրդական  
Խորհրդական

Տրատու անդամուհիներու թիւն է 33

Թիւ վարչական ժողովներու 10

Թիւ անդամական ժողովներու 10

Անդամատուրքերէ եւ ճաշաժողովներէ գոյացած է 272.40 տուլար

Նորակառոյց եկեղեցւոյ հընտին նուիրուած է օծման օրը 500.00 տուլար

Ս . ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՆ ԵԿԵՂԵՑԻ  
ՄԵԾԱԳՈՅՆ ՊՈՍԹՈՆԻ

ԼԻՆ – ՍԷՅԼԸՍ – ՓԻՊԱՏԻԻ

ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1961 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Եկեղեցասէր Տիկնանց Միութեանս տարեկան ընդհանուր ժողովը գու-  
մարուեցաւ Փետրուար 3-ին եւ հետեւեալ չորս տիկինները ընտրուեցան.-  
Արաքսի Ուզունեան, Ալիս Կիւլէզեան, Արաքսի Կոստանեան եւ Սոնիա Զօրեան:

Առաջին վարչական ժողովը տեղի ունեցաւ Մարտ 2-ին, ուր դիւանը  
կազմուեցաւ հետեւեալ ձեւով.-

Արաքսի Ուզունեան	Ատենապետուհի
Վենիւս Կիւլէզեան	Փոխ-ատենապետուհի
Սոնիա Զօրեան	Ատենաղպրուհի
Արաքսի Կոստանեան	Փոխ-ատենաղպրուհի
Աննա Սողիկեան	Գանձապահ
Սառա Տիրատուրեան	Փոխ-գանձապահ
Ալիս Կիւլէզեան	Խորհրդական

Տարուան ընթացքին ունեցանք հետեւեալ ձեռնարկները, որոնք յաջո-  
ղութեամբ պսակուեցան:

- 1.- Ճաշկերոյթ, Բիւֆէթ Բարթի, Մարտ 18, Փօլ Րիվիըր Սրահին մէջ:
- 2.- Ս. Պատարագ, Ապրիլ 10-ին, Ս. Ստեփանոս Եպիսկոպոսական եկեղեց-  
ւոյ մէջ: Պատարագեց Տէր Հայրը:
- 3.- Բէյթ Սէյլ, Յունիս 10-ին, Րոնըրզ Տիբարթմէնդ Սթորի մէջ:
- 4.- Ճաշկերոյթ, Միութեան չորրորդ տարեդարձին առթիւ, Նոյեմբեր  
5-ին, Փօլ Րիվիըր Սրահին մէջ:

Այս տարի եկեղեցւոյ շինութեան Ֆընտին նուիրեցինք հազար տուար,  
յիշատակարան պատուհանի մը համար:

ՏԱՐԵԿԱՆ ԵԼԵԻՄՈՒՏՔ

ՄՈՒՏՔ

ԵԼՔ

Պատրաստ Դրամ	18.28	Ժողովի Սենեակի Վարձք	10.00
Դրամատան տոկոս	11.22	Նուէր եկեղեցւոյ Ֆընտին	1000.00
Բիւֆէթ Բարթիէն	236.04		
Բէյթ Սէյլէն	52.85		
Դաշտահանութիւն	48.40		
Տարեդարձի Տօնակատարութիւնէն	323.05		
Եկեղեցւոյ Արարողութիւնէն	155.73		
Նուէրներ	72.00	Գումար	1070.00
Անդամավճարներ	111.00	Պատրաստ Դրամ	18.57
Ընդհանուր Գումար	1028.57	Ընդհանուր Գումար	1028.57

Սոնիա Զօրեան  
Ատենաղպրուհի

Արաքսի Ուզունեան  
Ատենապետուհի



Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ ՆԿԵՂՆԵՏԻ  
ՍԵՄԱԳՈՅՆ ՈՍԹՈՆԻ

ՏՈՐՉԷՍԹՐԻ ՀԱՅԿԱԶՆԱՆ ՀԱՅ ԴՐՈՑ

1961 ՏԱՐԻՈՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

-----

Այի Դպրոցը տեղի կ'ունենայ շաբաթ առտուները Տորչէսթրի Ուայ-էմ-Սի-  
Մէշ:

Աշակերտութեան թիւն է 12:

Ուսուցչուհին է Արաքսի Աղանեան:

Դպրոցի տարեկան ծախքն է 300.00 տոլար:

Դպրոցի պիւտճէն կը փակուի խնամակալութեան շնքերով:

Դպրոցի խնամակալութիւնը ղժբախտաբար չի քաջալերուիր ժողովուրդէն  
այս նուիրական գործին համար:

Պատրաստուած ներկայացումը ձախողեցաւ այլազան պատճառներով

Պէտք ունինք ծնողներու քաջալերանքին իրենց զաւակները դպրոց  
բերելով:

Պէտք ունինք ժողովուրդի նիւթական գոհողութեան եւ քաջալերանքին  
դպրոցի ծախքերը հոգալու եւ յարատեւելու համար:

Քարտուղարուհի

Տիկ. Ե. Կիւրեղեան